Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս). Փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ Սուքիասյան Հ. Կ., խմբ.՝ Վիրաբյան Ա. Ս., Խաչատրյան Կ. Հ.), Հայաստանի ազգային արխիվի հրատ., Ե., 2009, 218 էջ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանի Առաջին հանրապետության պատմության տարբեր շրջափուլերի մասին հրատարակվել են բազում աշխատանքներ: Չնայած այս հանգամանքին՝ այդ երկուսուկես տարվա վերաբերյալ դեռևս կան չլուսաբանված կամ թերի մնացած հիմնախնդիրներ, որոնց բարձրացումը կարևոր է ոչ միայն Առաջին հանրապետության պատմության ամբողջացման, այլև Հայաստանի մերօրյա տարբեր խնդիրների ընկալման տեսակետից: Այսպիսի հարցերի թվին են պատկանում 1918 թ. մայիսին Հայաստանի անկախության հռչակման, իշխանության կենտրոնական մարմինների (խորհրդարան, կառավարություն) ձևավորման, վերջիններիս՝ Թիֆլիսից Երևան տեղափոխման հարցերը:

Հայտնի իրողություն է, որ նոր և նորագույն ժամանակաշրջանների իրադարձությունները համակողմանի ուսումնասիրելու տեսակետից հատկապես կարևոր են արխիվային վավերագրերի թեմատիկ հրատարակությունները: Ահա այս առումով է արժևորվում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի երիտասարդ աշխատակից Համո Սուքիասյանի կազմած և ծանոթագրած «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Աշխատանքը հրատարակության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը և Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհուրդները, խմբագիրներն են պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանը և պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Խաչատրյանը:

Ժողովածուն կազմված է առաջաբանից, փաստաթղթերից ու նյութերից, անձնանունների ցանկից և բովանդակությունից: Ոչ մեծ, սակայն վերլուծաբար շարադրված առաջաբանում (էջ 3-13) համակողմանիորեն ներկայացվում է խնդրո առարկա հիմնախնդիրը, այնուհետև նշվում են հրապարակման սկզբունքները: Անդրադառնալով Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀՀ խորհրդարանի և կառավարության ձևավորման ընթացքին՝ Հ. Սուքիասյանը, իրավացիորեն նկատելով, որ «Հ. Քաջազնունին խնդիր էր դրել կառավարության անդամության թեկնածուների հետ Երևան ժամանելուց հետո այստեղ վերջնականապես որոշել կառավարության կազմը», մատնանշում է. «Հայոց ազգային խորհրդի կողմից ՀՀ կառավարության կազմի վերաբերյալ պաշտոնապես տեղեկացվեց միայն հուլիսի 24-ին՝ Երևան ժամանելուց և տեղի գործիչների հետ վերջնական եզրահանգման գալուց հետո» (էջ 9):

Ժողովածուում ներառված 95 փաստաթղթերն ու նյութերը (արխիվային վավերագրեր, ժամանակի մամուլից քաղվածքներ, ժամանակակիցների հուշեր) նորահայտ և բավական արժեքավոր տեղեկություններ են պարունակում 1918 թ. մայիսի 26-ի (Անդրկովկասյան սեյմի լուծարում) և օգոստոսի 1-ի (Հայաստանի խորհրդի բացում) միջև ընկած ժամանակաշրջանի

վերաբերյալ: Հրապարակումները պատկերացում են տալիս Հայաստանի անկախության հռչակման ընթացքի, Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գործունեության, Ազգային խորհրդի՝ Հայաստանի խորհրդի վերածվելու ընթացքի, Հովհաննես Քաջազնունու գլխավորած անդրանիկ կառավարության ձևավորման, ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների՝ Թիֆլիսից Երևան տեղափոխվելու խնդրի մասին: Բացահայտվում է նաև քաղաքական, սոցիալական այն ծանր իրավիճակը, որի մեջ հայտնվել էր հայ ժողովուրդը, հայ ղեկավար գործիչների մտորումները՝ հայությանը բնաջընջումից փրկելու, հայկական անկախ պետություն ստեղծելու, հարևանների հետ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ստանձնել էր նորանկախ հանրապետության գերագույն իշխանությունը կրող մարմնի գործառույթները: Այդ իսկ պատճառով հրատարակված փաստաթղթերի շարքում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ազգային խորհրդի 1918 թ. մայիսի 26-ից մինչև հուլիսի 14-ն ընդգրկող շրջանի 19 նիստերի առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող արձանագրությունները (փաստ. N 1, 4, 5, 6, 10, 12, 16, 20, 25, 30, 32, 33, 35, 37, 46, 54, 55, 59, 61): Վերջինները պատկերացում են տալիս Հայաստանի անկախության հռչակման, ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների ձևավորման ընթացքի և Երևան տեղափոխվելուն առնչվող խնդիրների շուրջ Ազգային խորհրդում ընթացած քննարկումների ու որոշումների մասին:

Փաստաթղթերի և նյութերի վերջին մասում տեղադրված 7 ժամանակակիցների (Արտաշես Բաբալյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Արշակ Ջամալյան, Սիմոն Վրացյան, Արշամ Խոնդկարյան, Արշավիր Շահխաթունի, Արշալույս Աստվածատրյան) հուշերն ավելի ամբողջական են դարձնում մեր ընկալումը խնդրո առարկա հիմնախնդրի վերաբերյալ: Բանն այն է, որ տվյալ իրադարձություններից տարիներ (նաև տասնամյակներ) անց շարադրված այդ աշխատանքները զերծ չեն հեղինակային անհատական վերաբերմունքից և որոշ անճշտություններից: Այս առումով գովելի է, որ ծանոթագրություններում վերհանված են առկա առանձին անճշտություններ:

Հատկապես կարևոր են ժողովածուի ավելի քան 240 ծանոթագրությունները: Դրանք օգնում են պատկերացում կազմելու զուգահեռ ընթացող քաղաքական իրադարձությունների մասին, ներկայացնում են փաստաթղթերում հիշատակվող տարբեր անձանց դերը և գործունեությունը: Այսպես՝ հանդիպում ենք Հովհաննես Թումանյանի անվանը, և Հ. Սուքիասյանը պարզաբանում է, որ Հ. Թումանյանը ոչ թե Հայոց ազգային խորհրդի անդամ էր, այլ միայն ներկա էր խորհրդի նիստին (էջ 78):

Կարծում ենք, ցանկալի կլիներ, որ տրվեր ոչ միայն Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի և կառավարության ձևավորման նախապատմությունը, այլև վերջիններիս գործունեությունը մինչև Հ. Քաջազնունու անդրանիկ կառավարության վախճանը (1918 թ. նոյեմբեր) կամ էլ մինչև խորհրդարանական ընտրությունները (1919 թ. հունիս): Այս հանգամանքը, սակայն, ամենևին չի նվազեցնում կատարված աշխատանքի արժեքը:

Ուսումնասիրողի աշխատանքն էականորեն հեշտացնում է ժողովածուի գիտատեղեկատվական հավելվածը՝ անձնանունների ցանկն ու հրապարակվող նյութերի բովանդակությունը: Ցանկալի կլիներ տեղադրել նաև տեղանունների ցանկ, թեև փաստաթղթերի ժողովածուի պարագայում դա

առաջնային չէ: Ցավոք, վերջին տարիներին մեզանում հրատարակված աշխատանքների զգալի մասը զուրկ է գիտատեղեկատու մասից:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք արձանագրել, որ փաստաթղթերի և նյութերի գրախոսվող սույն ժողովածուն իր ուրույն տեղը կունենա մեր պատմագիտական գրականության անդաստանում: Ի դեմս պատմագիտության ասպարեզ ոտք դրած երիտասարդ հետազոտող Համո Սուքիասյանի՝ տեսնում ենք պրպտող, արխիվային նյութերի հետ մանրակրկիտ աշխատող, տարբեր պատմական փաստերը համադրելու և հաջող ընդհանրացումներ ու վերլուծություններ կատարելու ունակ երիտասարդի:

ՀԱԿՈԲՅԱՆ Ա. Մ.
Պատմական գիտությունների դոկտոր